

տաքսախառն կերպաներու, ինչպէս նաև ատոնց նման ուրիշ հիւսուածեղէններու»:(2) Իսկ Մարքո Բօլօ կը հաւատտէ թէ Թուրքոմանիոյ ներսերը (Գոնիա, Սեբաստիա, Կեսարիա, Երզնկա) կ'արտադրուին «ամենաչքեղ եւ ճոխ մետաքսեայ կերպաններ, թէ մութ կարմրադոյն եւ թէ ուրիշ դոյն»:(3) Որոնց հիւսուողները, կ'աւելցնէ նոյն աշխարհահոգեակ ուղեղերը, հայեր եւ յոյներ էին: Գարձեալ ինքն է որ կը վկայէ թէ Թաւրիզի բնակիչները «բաղմաթիւ տեսակ եւ մեծ արժէքով ոսկիէ եւ մետաքսէ դիպակներ կը պատրաստէին»:(1) Իսկ Մուսուլ կ'արտադրէր «մետաքսէ եւ ոսկեթել դիպակներ ՄՈՒՄՈՒԻԻՆ կոչուած»:(2) Վենետիկցին կը վկայէ որ ԺԳ. դարուն Վրաստանի բնակիչք «ունին մետաքսի մեծ առատութիւն, եւ կը շինեն մետաքս ու ոսկի դիպակներու ամենազեղեցիկները, որոնք որեւէ տեղ տեսնուած ըլլան»:(3) Գուցէ Վրաստանով հոս պէտք է հասկնալ արեւելեան Հայաստան նախկին Աղուանքն ալ մէջ առնելով: Ամէն պարագայի տակ որոշ է, որ Թիֆլիսի բնակչութիւնը կը բաղկանար Հայերէ եւ Վրացիներէ ըստ այս ուղեգրին, եւ անդ «մետաքսէ եւ բաղմաթիւ ուրիշ տեսակ կերպաններ կ'արտադրուին հոն»:(4) Ան չի մոռնար յիշելու, որ Մեծ ծովուն (Կասպից) վրայ ձենովացիք այդ ատենները նոյնիսկ՝ վաճառականութեան համար անշուշտ՝ նաւարկութեան ձեռնարկեցին, եւ այնտեղէն «կուղայ մետաքսը որ կը կոչուի Ghelle»:(5) Ղէլէ ինձի պարզապէս աղաւաղումը կ'երեւայ Ղիլան կամ Կիլանի, Պարսից նշանաւոր մետաքսաբեր նահանգին անուան:

Անտարակոյս, վերոյիշեալ արտադրութիւններէն զատ Այաս կը բերուէին արտահայ-

նութեան համար ուրիշ վայրերու արտադրութիւններն ալ: «Պաղտատի մէջ կը շինուին բաղմաթիւ տեսակի ոսկի եւ մետաքս դիպակներ, ինչպէս օրինակի համար nasich եւ nac (6) մութ կարմիր թաւիչ (cramoisy) եւ դեռ ուրիշ տեսակներ, շատ ճոխօրէն աշխատուած կենդանեաց եւ թռչնոց դժածեւերով»:(7) Որոնց նման էին Եազտի եւ Գիրմանի կոչուած նուրբ, սիրուն, ասեղնադորձեալ վարադոյրները, վերմակները, բարձերը բաղմոցները եւ այլն, շինուած համանուն քաղաքներուն պարսկուհիներուն ճարպիկ մատներով եւ դունազեղ դժազրութիւններով ներկայացնելով կենդանիներ, թռչուններ, ծաղիկներ եւայլն: Jordanus (1330) որոշ կը վկայէ որ «Պարսկաստան ունի առատ մետաքս»:(8)

ԺԳ. դարուն Հայակիլիկիոյ հետ միասին Այասն ալ ելաւ Հայոց ձեռքէն, եւ, սակայն, հայերը շարունակեցին տէր մնալ հոս մետաքսի առեւտուրին այս անգամ ուրիշ ճամբաներու վրայ: Ես դիտել տալ կ'ուզեմ, որ Հայակիլիկիոյ Հայոց ձեռքէն ելլալէն վերջ այդ առեւտրաշահ երկրամասին առեւտուրն ալ ինքնին դադարեցաւ, եւ հազիւ ԺԶ. դարուն սկիզբը Հայէպ դարձեալ իր Հայ վաճառականներուն շնորհիւ մասամբ տիրացաւ այն մեծ առեւտուրին, որ Միջերկրականի այս ծովեզերքը ունէր ժամանակին: Գարձեալ Հայ առեւտրականներ Կիլանի, Շամսիի, Արաշի, Վրաստանի եւ Հայակովկասի մետաքսը Հայէպ կը բերէին անկէ Ալեքսանտրէզի կամ Տրիպոլիոյ նաւահանգիստով Վենետիկ, Լիվերնօ, Մարսէյլ, կամ Եւրոպա այլուր տանելու համար: 1500-ական թիւերուն Ջուղայեցիներ արդէն տէր էին Եզիպոսի, կամ Միջերկրական Եւրոպայի շուկաներուն համեմի, զիստորի, մանաւանդ հոս մետաքսի գործին: Իրաւ է, Սելճուդ-

(2) Burchard of Mt. Sion.— Trans. by Aubrey Stewart, London, 1896, p. 16:  
 (3) The Travels.—p. 23:  
 (1) Անդ էջ 33:  
 (2) Անդ էջ 24:  
 (3) Անդ էջ 23:  
 (4) Անդ էջ 24:  
 (5) Անդ էջ 23:

(6) Նասիլս.— արաբերէն կը նշանակէ ոսկի կամ արծաթ թելով մետաքսահիւս դիպակ: Իսկ նախ էս կը սրբադրեմ նիլս, որ կը նշանակէ մետաքսաթել եւ նկարէն սիւնոց:  
 (7) Անդ էջ 25:  
 (8) The Hakluyt Society.— I. Seris No. 31, London, 1863, էջ 9: